սրբազանները նախնի սովորութեան համաձայն ճաշ և հրաժեշտի ողջոյն տուին Մայր Աթոռի միաբանութեան։ Նորին Սրբութիւնը հաճեցաւ մի քանի րոպէով սեղանակից լինել Միաբանութեան։ ապա խրատներ տալով նորընծայ միաբանակից սրբազաններին՝ օրհնեց նրանց և բարի ճանապարհ մաղթեց։ Մայր Աթոռի ամբողջ միաբանութիւնը, հիւրերն ու ճեմարանի սաները յոտնկայս լսում էին հոգևոր պետի ճառը։ Նորին սրբութեան հեռանալուց յետոյ՝ դերապատիւ Տ. Յովսէփ նորընծայ եպիսկոպոսը ի դիմաց իւր օծակիցների շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբութեան ցոյց տուած հայրական սիրոյ համար և առաջարկեց Նորին Սրբութեան կենացը։ Ապա Տ. Յովհաննէս եպիսկոպոս հակիրճ կերպով իւր ընկերների կողմից շնորհակալութիւն յայտնեց Մայր Աթոռի միաբանութեան և կենաց բաժակ առաջարկեց Մայր Աթոռի հաստատութեան և միաբանութեան համար։ Միաբանութեան կողմից նորընծայ սրբազանների կենացն առաջարկեց Դերապատիւ Մակար սրբազանը։ Ի վերջոյ Տ. Յովհաննէս սրբազանը խմեց նաև ճեմարանի սաների և ուսուցչական խմբի կենացը, բարեմաղթելով որ ճեմարանը Մայր Աթոռի և Հայաստանեայց եկեղեցու համար պարտաճանաչ և հաւատարիմ սպասաւորներ պատրաստէ։ Մէջ ընդ մէջ ճեմարանական խումբը երգում էր պաշտաճաւոր երգեր։

Նորընծայ սրբազանները Մայր Աթոռից դէպի իրենց թեմերը ճանապարհ ընկան յունիսի 2-ին։

— Անւոյ և Աղջոյ վանից վանահայրերն արձակուելով իրենց պաշտօններից՝ կանչուեցին Մայր Աթոռս, մի մի վանքի միաբան նշանակուելու համար։

Մայիսի 14-ին Նոցին Կայսերական Մեծութեանց թագաւոր Կայսեր և թագուհի Կայսերուհւոյ թագադրութեան տարեդարձի օրը ս. Պատարագից և Կայսերական մաղթանքից յետոյ, ազգիս Վեհափառ Հայրապետը մի հեռագրով յանուն Նորին Մեծութեան թագաւոր Կայսեր՝ շնորհաւորեց Նոցին Մեծութեանց թագադրութեան տարեդարձը։ Երկրորդ օրը ըստացուեց Ներքին գործոց Տ Նախարարից հեռագրական պատասխան, որով Նոցին Մեծութեանց շնորհակալութիւնն է յայտնում Վեհափառ Հայրապետին Իւր շնորհաւորութեանց համար։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Հոգևոր Տիրոջ յանուն Ճեմարանի Վարչութեան ուղղած սրբ. կոնդակը, որը տպուած է սոյն համարի Պաշտօնական մասում՝ պատուիրում է պատրաստութիւններ տեսնել վայելուչ կերպով տօնելու Հայաստանեայց եկեղեցւոյ միակ հոգևոր բարձրագոյն դպրոցի՝ Ճեմարանի 25 ամեայ տարեդարձը։ Յոյս ունինք, որ եկեղեցւոյ հարազատները կլսեն այդ հրաւէրը և կամաւոր նուէրներով կնպաստեն այս կարևոր հաստատութեան ապահովութեանն ու աւելի բարեյաջող զարգացմանը՝ աչքի առաջ ունենալով նորա մեծ նպատակը։ Եկեղեցու համար կրթուած և հաւատարիմ սպասաւորներ պատրաստելը մի այնպիսի գործ է, որ մեր ժողովրդի սրտին շատ մօտ պէտք է լինի։ Մայր Աթոռը իւր բոլոր եկամուտների մի խոշոր մասը գործադրելով Ճեմարանի վերայ, սոխպուած է յաճախ ծախսերի կրճատումներ անել նոյն իսկ անհրաժեշտ պէտքերի համար։ Հայ հասարակութեան աջակցութիւնը միջոց պէտք է տայ Նորան այդ դրութիւնից ելնելու և ուրիշ բարեգործական և եկեղեցուն վայել ձեռնարկութիւններ անելու։

Ապրիլ 28-ին Ճեմարանում շքեղ հանդիսով կատարուեցաւ Ռուսաց մեծ բանաստեղծ Պուշկինի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի յիշատակը։ Ճեմարանի Դ. Լսարանի ուսանողներից մէկը ռուսերէն լեզուով կարդաց իւր գրած Պուշկինի կենսագրութիւնը, իսկ

միւսները անգիր արտասանեցին բանաստեղծի ընտիր գրուածներից ամբողջ հատուածներ։ Հանդիսին մասնակցում և անգիր ոտանաւորներ էին ասում նաև տաճկաստանցի փոքրիկ աշակերտներ։ Ճեմարանիս ուսուցիչ բանաստեղծ պ. Ց. Յովհաննիսեան կարդաց Պուշկինից իւր թարգմանած երեք ոտանաւորները։ Խումբը մէջ առ մէջ գեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էր ռուսական խմբական երգեր։ Հանդիսին ներկայ էին ոչ միայն ամբողջ ուսուցչական խումբը, այլ և Մայր Աթոռի միաբանութիւնից շատերը։ Հանդիսի վերջում Գերապատիւ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը օրհնեց ուսուցչական խումբն ու աշակերտներին և գոհունակութիւն յայտնեց աշակերտների գեղեցիկ արտասանութեան և յառաջադիմութեան համար։ Երեկոյեան շքեղ լուսավառութիւն կար, որ վառ եղանակի պատճառով խանգարուեցաւ։

Այս տարի դպրանոցական դասընթացքն աւարտելով լսարան փսխաղրուեցան 16 հոգի։

Մայիսի 31-ին քննութիւնները վերջացան Ճեմարանում։ Իսկ ճեմարանական դասընթացքն աւարտում են 12 հոգի՝

1. Աբեղեան Արտաշէս Աստապատցի
2. Արովեան Համբարձում Քանաքեռցի.
3. Արիստակէսեան Յակոբ, Աստապատցի.
4. Գրիգորեան Յովսէփ Սղնախեցի.
5. Խուդեան Սարգիս, Ախալքալաքեցի (Գոբուայ).
6. Մաքսուդեան Յարութիւն, Ակնցի.
7. Մելքիսեդեկեան Գրիգոր սարկ. Վ. Աղդանցի.
8. Յովակիմեան Հայկ, Երևանցի.
9. Պապովեան Ալէքսանդր, Տփխիսցի.
10. Տ. Յովհաննիսեան Յակոբ, Մնձորեստանցի.
11. Տ. Ոսկանեան Արշակ, Հաղբութցի.
12. Փսերեան Եղիազար, Զալղիրցի։

Սոցանից երկուսն արդէն ընդունուած են Մայր Աթոռի միաբանութեան մէջ. մնացածներն ևս պատրաստ են հոգևոր կոչումն ընդունելու։

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Քաղցրահայեաց վանքը վերանորոգման ձեռնարկուած է Տ. Եղիշէ Ծ. Վ. Գալֆազեանի նախաձեռնութեամբ, և հաւանութեամբ Ս. Պատրիարք Հօր։ Որքան ուրախառիթ է այդ հինաւուրց ու գեղեցիկ մենաստանին վերաշինութեան գործը՝ նոյնքան ալ ուրախառիթ է որ որբանոց մը պիտի հաստատուի այնտեղ, ուր ընդունելիք տղաքը առժամապէս կը յաձախեն հիմա քաղքին ազգ. վարժարանը։ Պոլսեբնակ ճարտարապետ Յովհաննէս էֆ. Ալնաւորեան Բալուցիներու փափագին համաձայն իր քով ի պահ գրուած գումարը այս օրերս յանձնած է Ս. Պատրիարք Հօր, Քաղցրահայեացի վերաշինութեան յատկացուելու համար։ Այս բոլոր նպաստաւոր պարագաները յուսալ կուտան թէ բնական սքանչելի դիրքով մը օժտուած այդ վաղնմի մենաստանը իր արդի լքուած վիճակէն մօտ ժամանակի մէջ պիտի վերածուի բնակելի ու կոկուած վիճակի մը և պիտի ըլլայ դիշերօթիկ կրթարան որուն ամէն յարմարութիւն ունի։

— Ազգ. Կենդրոնական վարժարանին մէջ գործիական երաժշտութեան դաս մը հաստատուած է և տանի չափ աշակերտներ սկսած են արդէն հետևիլ անոր՝ ջութակի, թաւջութակի և մանտոլինի ճիւղերը ընտրելով։

— Վանայ այցելու Հովիւ Տ. Ներսէս եպիսկոպոս Աղանեան և Քղիի առաջն. տեղապահ Տ. Վահրիճ վարդապետ Ղազարու շաբաթ օրը մեկնեցան մայրաքաղաքէն Լոյտի Արոլլ շոգենաւով։ Ս. Պատրիարք Հօր կողմէ Տ. Դանիել վարդապետ շոգենաւ գնաց ողջերթ մաղթելու. նոյնպէս Պոյաճը գիւղի թաղխորհուրդը և բաւական թուով ազգայիններ։ Ասլանեան սրբազան և իր ուղեկից վարդապետը աւագ հինգշաբթի օրը կը հասնին Ցրապիզոն։ Հետևաբար Զատկի տօնը հոն անցընելէ ետքը պիտի շարունակեն իրենց ուղևորութիւնը դէպի Վան։

— Պիթլիսի առաջնորդարանէն տեղւոյն կարօտեալներուն համար հեռագրով նպաստ խնդրուած ըլլալով։ Ազգ. պատրիարքարանի կողմէ հեռագրուեցաւ թէ որոշուած գումար մը թղթատարով ճամբայ հանուած է արդէն։

— Ուրիշայէն կը գրեն մարտ 30 թուականով. «Գոհութեամբ կը նշանակենք թէ ս. Պատրիարք Հօր միջոցաւ Պրայթընի բարեսէր ազգայնոց կողմէ դրամական նպաստ ղրկուած է այս անգամ տեղւոյս Ազգ. որբանոցին։ Հեռուէն եկած այս կարգի նուէրներու կարօտութիւն կայ։ խորհելով մանաւանդ՝ որ նոյն հաստատութեան եկեւմտացոյցը միշտ բաց մը ունի։ զոր գոցելու համար տեղացի ազգային-